

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Վանաձոր համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի հաստատման մասին» ավագանու որոշման նախագծի հանրային քննարկման ընթացքում ստացված առաջարկությունների

Հ / հ	Առաջարկության հեղինակը, ամսաթիվ	Առաջարկության ամփոփ բովանդակությունը	Համայնքի ղեկավարի եզրակացությունը	Նախագծում կատարված փոփոխությունը կամ լրացումը
	1	2	3	4
1	Ավագանու անդամ Արմեն Մատինյան	2019 համայնքի բյուջեի նախագծի ծախսային մասում ավելացնել 5 մլն դրամ արժեքով ծախսային տող SFՄ օրենքով սահմանված կարգով ավագանու խմբակցությունների հատկացված աշխատասենյակներում մեկական փոքր ձևերի հաստիք ունենալու նպատակով:	Առաջարկությունն ընդունված է	Համայնքի բյուջեում սահմանված ընթացակարգով ծախսային մասում կնխատեսվեն անհրաժեշտ ֆինանսական միջոցներ գործավարների հաստիքները ապահովելու նպատակով
2	Ավագանու անդամ Գայանե Քալանթարյան	Համայնքի զարգացման ռազմավարության մեջ նախատեսել նաև համայնքային ենթակայության կամ այլ իրավակազմակերպչական ձևով գործող, սակայն համայնքի կողմից ֆինանսավորվող հոգեբանական ծառայություն	Գաղափարն ընդունելի է, սակայն պահանջում է լրացուցիչ ուսումնասիրություն և քննարկումներ	Բյուջեում փոփոխություն չի կատարվել
3	Ավագանու անդամ Սոխակ Մելքոնյան	Համայնքի զարգացման ռազմավարության մեջ նախատեսել նաև համայնքային ձեռնարկությունների ստեղծումը, որոնք շահույթ կհետապնդեն և կապահովեն լրացուցիչ եկամուտներ բյուջեի համար	Գաղափարն ընդունելի է, սակայն անհրաժեշտ է լրացուցիչ ուսումնասիրություններ հարցի իրավական կողմը հիմնավորելու նպատակով	Բյուջեում փոփոխություն չի կատարվել

Աշխատակազմի քարտուղար



Արթուր Օհանյան